ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 28 դեկտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Մ. Թոփուզյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով «Բիկսա» ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

«Բիկսա» ՍՊԸ-ն դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 233 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով, ըստ որի գործի քննությունը մերժվում է, «եթե դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը»:

Դիմումում առաջադրված՝ 231-րդ /նախկինում 230 հոդված/ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /նախկինում 231.1 հոդված/ և 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /նախկինում 231.2 հոդված/ վերաբերյալ առկա են ՀՀ ՍԴ որոշումներ /ՍԴՈ 690, 754, 765, 817/:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 32 հոդվածի 3-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

«Բիկսա» ՍՊԸ-ի դիմումի ընդունելությունը՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 233 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել՝ տրամադրելով նրան ՍԴՈ-690, 754, 765, 817 որոշումները:

Նախագահող՝

Անդամներ՝